



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«22» հունիսի 2017 թվականի N 48

ք.Գյումրի

ԼԻՊԱՐԻՏ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ, 163-րդ հոդվածների, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ կետի «դ» ենթակետի, «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով Լիպարիտ Մարտիրոսյանի 2017 թվականի հունիսի 20-ի դիմումը.

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Լիպարիտ Մարտիրոսյանին տրամադրել ամենամյա նվազագույն արձակուրդից 7 աշխատանքային օր՝ 2017 թվականի հուլիսի 6-ից 14-ը ներառյալ:
2. Հիմնական արձակուրդային վճարից բացի վճարել լրացուցիչ միանվագ արձակուրդային վճար՝ միջին ամսական աշխատավարձի չափով:
3. Լիպարիտ Մարտիրոսյանի՝ արձակուրդում գտնվելու ընթացքում աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչության պետի տեղակալ Արմեն Համբարձումյանին:

Իսկականի հետ ճիշտ է



Ա.ԽԱԶԱՏՐՅԱՆ